

ԱՐԱՐԱՏ

ԹԻԻ Գ. — ՇՐՋԱՆ ԺԹ. **1886** ՏԱՐԻ ԺԹ. ՄԱՐՏ 31

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԾՐԻԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ

Տարւոյս Յունիսի 15 ին, կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի տօնին ըստ յաջողելոյ Տեառն Աստուծոյ՝ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոս ամենայն Հայոց Տ. ՄԱԿԱՐ մտադրեալ է Ս. Միւռոն օրհնել:

Ս. Միւռոնի օրհնութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններից առաջինն է. Վեհ. Հայրապետը հաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հայ հոգևորականք և աշխարհականք ըստ նախնի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Աթոռս և վայելեն Ս. Միւռոնի օրհնութեան շնորհը: